



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ**

**Ղ Ե Կ Ա Վ Ա Ր**

**Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1**  
**« 15 » հունվարի 2018 թ.**

**N 02/10.1/362-18**

**AJV-01-04\_2018-01-11**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ  
պարոն ԱՐԱ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ**

**Հարգելի պարոն Սաղաթեյան**

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-213-14.12.2017-ՊԻՄԻ-017/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունվարի 11-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 2 - Ա որոշումը:

**Հարգանքով՝**

**ՎԱՀԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ  
(Պ-213-14.12.2017-ՊԻՄԻ-017/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը, հաշվի առնելով նախորդ տարիների փորձը, գտնում է, որ ներկայացված օրենքի նախագծի 3-րդ և 4-րդ հոդվածներով գործող օրենքի համապատասխանաբար 43-րդ և 46-րդ հոդվածներում կատարվող լրացումները բավարար հիմնավորված չեն, և դրանց ընդունման անհրաժեշտությունը բացակայում է: Ուստի, առաջարկում ենք օրենքի նախագծի 3-րդ և 4-րդ հոդվածները հանել:



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 հունվարի 2018 թվականի N 2 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ  
Մ Ա Ս Ի Ն

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Արթուր Հովհաննիսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-213-14.12.2017-ՊԻՄԻ-017/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

2018 թ. հունվարի 11  
Երևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ**

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-9-Ն սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 2-րդ մասի 15-րդ կետում «իրավասու մշտական հանձնաժողովի» բառերից առաջ լրացնել «Ազգային ժողովի» բառերը, իսկ «իրավասու մշտական հանձնաժողովի» բառերից հետո լրացնել «(այսուհետ՝ նաեւ իրավասու մշտական հանձնաժողով)» բառերը:

**Հոդված 2.** Օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին նախադասությունում «ղեկավար» բառը փոխարինել «նախագահը» բառով:

**Հոդված 3.** Օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասում «հատուկ ընթացակարգերի» բառերից հետո լրացնել «, ինչպես նաեւ Ազգային ժողովի գործունեության կազմակերպման» բառերը:

**Հոդված 4.** Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասում «հատուկ ընթացակարգերի» բառերից հետո լրացնել «, ինչպես նաեւ Ազգային ժողովի գործունեության կազմակերպման» բառերը:

**Հոդված 5.** Օրենքի 65-րդ հոդվածի 4-րդ մասում ««Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության» բառերից հետո լրացնել «սահմանադրական» բառը:

**Հոդված 6.** Օրենքի 76-րդ հոդվածի 2-րդ մասում ««Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության» բառերից հետո լրացնել «սահմանադրական» բառը:

**Հոդված 7.** Օրենքի 84-րդ հոդվածի 5-րդ մասում ««Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության» բառերից հետո լրացնել «սահմանադրական» բառը:

**Հոդված 8.** Օրենքի 109-րդ հոդվածի 3-րդ մասում ««Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության» բառերից հետո լրացնել «սահմանադրական» բառը:

**Հոդված 9.** Օրենքի 125-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասում «Ժամանակավոր կամ խմբակցության հանձնաժողովի որոշմամբ» բառերը փոխարինել «Ժամանակավոր հանձնաժողովի կամ խմբակցության որոշմամբ» բառերով,

2) 5-րդ մասում «հրավիրած հանձնաժողովի որոշմամբ» բառերը փոխարինել «հրավիրած՝ Ազգային ժողովի նախագահի, հանձնաժողովի կամ խմբակցության որոշմամբ» բառերով:

**Հոդված 10.** Օրենքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի «7-րդ մասով» բառերը փոխարինել «3-րդ մասով» բառերով:

**Հոդված 11.** Օրենքի 162-րդ հոդվածի 2-րդ մասում «քարտուղարությունը, որը Աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում է» բառերը փոխարինել «որն Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանում է» բառերով:

**Հոդված 12.** Օրենքի 167-րդ հոդվածի 1-ին մասում ««Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության» բառերից հետո լրացնել «սահմանադրական» բառը:

**Հոդված 13.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

## Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

### **«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ**

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է դրանում տեղ գտած վրիպակների շտկման, տարընթերցումների հնարավորություն տվող դրույթների հստակեցման անհրաժեշտությամբ: Մասնավորապես, Կանոնակարգի՝

- 5-րդ հոդվածի 15-րդ կետի փոփոխությունը պայմանավորված է առկա տարընթերցման վերացման անհրաժեշտությամբ, քանի որ Կանոնակարգում օգտագործվում է և «Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողով» և «իրավասու մշտական հանձնաժողով» բառերը, չնայած որ ՀՀ Սահմանադրության 108-րդ հոդվածի 4-րդ, 177-րդ հոդվածի 1-ին, 192-րդ հոդվածի 1-ին, 195-րդ հոդվածի 2-րդ, 197-րդ հոդվածի 2-րդ, 199-րդ հոդվածի 2-րդ և 201-րդ հոդվածի 1-ին մասերում օգտագործվում է միայն «Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողով» բառակապակցությունը,

- 34-րդ հոդվածի 7-րդ մասի «ղեկավարը» բառը «նախագահը» բառով փոխարինելու անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Կանոնակարգի 34-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ նախադասությունում, ինչպես նաև 9-րդ մասում օգտագործվում է «հանձնախմբի նախագահը» բառերը, ուստի նույն հասկացությունների մասով հարկ է կիրառել միևնույն տերմինաբանությունը,

- 43-րդ և 46-րդ հոդվածներում (նույնպես տարընթերցումներից խուսափելու նկատառումով) առաջարկվում է ավելացնել, որ Ազգային ժողովը կարող է համապատասխան դեպքերում ևս ընդունել Ազգային ժողովի գործունեության կազմակերպման հետ կապված որոշումներ (այնպես, ինչպես դա նախատեսված է Կանոնակարգի 40-րդ, 59-րդ և այլ հոդվածներում),

- 65-րդ, 76-րդ, 84-րդ, 109-րդ և 167-րդ հոդվածներում առաջարկվում է ճշգրտել «Հանրաքվեի մասին» և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքների անվանումները՝ դրանց մեջ ավելացնելով «սահմանադրական» բառը, դրանով իսկ նշված անվանումները համապատասխանեցնելով ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի 2-րդ մասին («Հանրաքվեի մասին» և «Սահմանադրական դատարանի մասին» օրենքները սահմանադրական օրենքներ են),

- 125-րդ հոդվածի 2-րդ մասում «հանձնաժողովի» բառը տեղափոխվում է «ժամանակավոր» բառից հետո, քանի որ ակնհայտորեն խմբակցությունը հանձնաժողով չունի, իսկ 5-րդ մասում խորհրդարանական լսումներ հրավիրողների ցանկում բացակայում է Ազգային ժողովի նախագահի հիշատակումը, որը նույնպես կարող է լսումներ հրավիրել,
- 129-րդ հոդվածում առաջարկվում է ճշգրտել 126-րդ հոդվածին կատարված հղումը, քանի որ վերջինս 3 մասից է բաղկացած, իսկ այն կարգին, որին կատարվում է հղումը ամրագրված է 126-րդ հոդվածի ոչ թե 7-րդ, այլ 3-րդ մասում,
- 162-րդ հոդվածում առաջարկվում ճշգրտել, որ մշտական հանձնաժողովի քարտուղարությունը ոչ թե Ազգային ժողովի աշխատակազմի առանձնացված, այլ կառուցվածքային ստորաբաժանում է: